



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1005-շհ/2 «07» 08 2020թ.

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 1032.03.5 «ՀՐԴԵՀԱՅԻՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 1032.03.01.5 «ՄԱՍՆԱԳԵՏ՝ ՀՐԴԵՀԱՅԻՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ. մարտի 22-ի թիվ 333-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 19-րդ կետը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1320-Ա/Ք հրամանի 3-րդ և 4-րդ կետերը, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. օգոստոսի 10-ի N 777-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը՝


Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 1032.03.5 «Հրդեհային պաշտպանություն» մասնագիտության 1032.03.01.5 «Մասնագետ՝ հրդեհային պաշտպանության» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:

2. Միջին մասնագիտական կրթության 1032.03.5 «Հրդեհային պաշտպանություն» մասնագիտության 1032.03.01.5 «Մասնագետ՝ հրդեհային պաշտպանության» որակավորման պետական կրթական չափորոշիչը փորձարկման նպատակով 2021-2022 ուսումնական տարվանից սկսած մեկ պարբերաշրջան ներդնել տվյալ մասնագիտությամբ լիցենզիա ստացած երկուսից ոչ ավել ուսումնական հաստատությունում:
3. «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի գործադիր տնօրենին՝ ապահովել չափորոշիչի փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից վերլուծական հաշվետվությունների ստացումը:
4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին:

Նախարար

Արայիկ Հարությունյան

 Invalid signature

X 

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378